

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

636  
S-98

1925

30 JUL 2010

Պրոլետարիատ բարու յնեկրներ, միացե՛ք.


Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ց Ո Ւ Ն

№ 9 (12) «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-ի № 9 (12)

Ա. ՖՐԻԴՈԼԻՆ

# ՏԱՄԸ ՊԱՏԳԱՄ ԱՆԱՍՆԱՊԱՀԻՆ

Թուս. Փոխագրեց՝  
Գյուղատնտես Ա. ԲԱԿՈՒՆՅԱ



Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
1925.

656

5 SEP 2013

21.650

22491


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ.

1. Յերկու խոսք մեր ընթերցողներին . . . . .	5
2. Յերկու խոսք . . . . .	6
3. Առաջին պատզամ . . . . .	9
4. Յերկրորդ » . . . . .	12
5. Յերրորդ » . . . . .	15
6. Զորբորդ » . . . . .	18
7. Հինգերորդ » . . . . .	21
8. Վիսերորդ » . . . . .	22
9. Ենթերորդ » . . . . .	25
10. Աւթերորդ » . . . . .	27
11. Իներորդ » . . . . .	29
12. Տասերորդ » . . . . .	32
13. Յեղակացություն . . . . .	36

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄՔ  
ՀԱՂԺՈՂ ԿՈՄԱՑԻ ԽՄԲ. ԿՈԼԱԾԳԻՑԵՑ

41799-68



12.9.13

Քրառեպվար № 43ր.

Տիրաժ 3,500

Գևորգատի յերկրորդ տպարան Յերեանում.

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Խորհրդային Հայաստանի Հողագործության Ժողովրդական  
Պոմիսարիատը «Գյուղացու Գրադարան» ընդհանուր վերնագրի տակ  
ձեռնարկել ե գյուղատնտեսության զանազան ճյուղերին նվիրած  
մի շարք գրքույկների հրատարակության: Նա նպատակ ունի այդ  
գրքույկների միջոցով զարկ տալ գյուղական տնտեսության բար-  
ձրացման յեզ նպատակահարմար ծեվերով տնտեսությունը վա-  
րելու գործում՝ պարզ ու ըմբռնելի ցուցմունքներով աջակցել  
գյուղացուն: Այս հիմնկան նպատակն իրագործելու համար  
գրքույկների նյութը հարմարեցված և միջին գրագետ գյուղացու  
պահանջներին:

Լավ գիտակցելով ձեռնարկված գործի լրջությունն ու կարե-  
վորությունը, Հողժողկոմատի Խմբագրական-Հրատարակչական  
Կոլլեգիան համոզված է, վոր այս գրքույկը, ինչպես յեզ մինչեւ  
որս իր հրատարակությամբ՝ լույս տեսած մյուս գրքույկները,  
նյութի յեզ լեզվի տեսակետից վորոշ թերություններ կարող են  
ունենալ:

Թե՛ այդ յեզ թե՛ այլ հնարավոր թերությունները վերա-  
ցնելու, հրատարակության գործը կանոնավորելու յեզ գյուղացու  
պահանջները բավարարելու համար Հողժողկոմատի Խմբագրա-  
կան-Հրատարակչական Կոլլեգիան խնդրում է ընթերցողներին յեզ  
գյուղատնտեսության աշխատավորներին իրենց դիտողություն-  
ներն ուղարկել Յերեվան, Հողժողկոմատ:

Ամեն մի արժեքավոր դիտողություն կընդունի մեծ շնոր-  
հակալությամբ:

Ծրաբները կարելի յե ուղարկել առանց նամակադրոշմի:

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԽՄԲ.՝ ՀՐԱՏ. ԿՈԼԼԵԳԻԱ

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեզանում ընդունված է խոսել ու գրել այն մասին, թե մեր անասնապահության նպատակն եւ վերականգնել անասնապահությունը յեվ հասցնել մինչպատերազմյան վիճակին:

Սակայն այստեղ բանակն եւ ի նկատի առնվագած. ի հարկի, դրա դեմ վոք չի կարող առարկել: Առանց թվերի յեվ պարզ ե, վոր համաշխարհային յեվ քաղաքացիական պատերազմներից հետո Հայաստանում չի մնացել ծիյերի յեվ տափարի այն քանակը, վոր կար պատերազմից առաջ:

Ահա թե ի՞նչ են ասում մեզ Կենտրոնական Վիճակագրական Գարչության թվերը.

Անասունների Տեսակը	1914 թ.	1922 թ.	Կրճատման %/ 1922 թ.
Խոշոր յեղջուրավոր . . . . .	579,914	339,918	45
Գոմեշ . . . . .	31,521		
Այծ յեվ վոչսար . . . . .	1,444,382	492,946	66
Զի . . . . .	44,303	15,354	66
Զորի . . . . .	3,046	1,033	66
Եշ . . . . .	34,313	17,061	50
Խոզ . . . . .	20,999	8,602	59
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b> . .	<b>2,158,478</b>	<b>874,914</b>	<b>58</b>

Այս թվերը ցուց են տալիս, վոր 1914 թվից մինչեւ 1922 թիվը Հայաստանում կենդանիների ամբողջ թիվը պակասել ե 58 տոկոսով: Ճշմարիտ են նրանք, վորոնք ասում են, թե՝ առաջին հերթին պիտք ե ավելացնել ծիյերի յեվ տափարի քանակը:

Բայց կարեվորը միայն բանակը չե: Մեր գյուղացու կովը միջին հաշվով տալիս ե 60 վեդրո կաթ, յեթե մեզ հաջողվի հասնել այն դրության, յերբ կստանանք յերկու անգամ ավելի կաթ, այսինքն՝ 120 վեդրո, կովերի քանակը յեթե  $50\%$  պակասելու յեվ

լինի, դարձյալ մենք նույն քանակությամբ արդյունք կստանանք մեր կովերից: Աւեմն միայն բանակով չի վորոշվում, այլ յեվ վորակով:

«Ավելի լավ ե մի լավ կաթնատու կով ունենալ, բան յերկու կաթնապակաս, ավելի լավ ե ունենալ մի կով յեվնրան լավ կերակրել, բան յերկու կով յեվ կերակրել վատ, ավելի լավ ե մի չաղ յեվ ուժեղ ծի պահել, բան յերկու լղար ու թուլ ծի յեվ այլն»:

Այս հասարակ յեվ պարզ ասացվածքներով մասամբ վորոշվում ե մեր անասնապահության վերականգնման խնդիրը. մեզ համար պարզ ե, վոր առաջին հերթին կարեվորությունն ե աղբական վորակին:

Ճիշտ ե, պատերազմից յեվ հեղափոխությունից առաջ ել այդ խնդրի վրա ուշադրություն դարձվում եր, բայց այժմ, յերբ մենք աղբատ ենք անասնապահական մթերքներով, խնդրի այդ կողմն առանձին իմաստ յեվ նշանակություն ե ստանում:

Յեթե յերկրագործության հերթական խնդիրն ե ստանալ յերկու հասկ այն տեղից, ուր մինչեւ այժմ ստացվում եր միայն մեկը, ապա անասնապահության համար հերթական խնդիր ե ստանալ յերկու շիշ կաթ այնտեղից, ուր մինչեւ այժմ ստացվում եր միայն մի շիշ: Իսկ այդ կախված ե անասունների լավ զոկելուց, լավ կերից, ուշադիր խնամքից յեվ պահպանությունից:

Չպիտի մոռանալ վոր անասնապահությունը սերտ կապված ե ընդհանուր գյուղատնտեսության հետ: Չի կարելի անասնապահության վրա նայել իբրև գյուղատնտեսության առանձին յեվ անկախ մի ճյուղի վրա, վորը վոչ մի կապ չունի յերկրագործության հետ: Յեթե առաջ կար խոշոր անասնապահ, այժմ անասնապահը յերկու-յերեք կով ունի միայն: Անկախ յեվ անհատական տնտեսության տեղը գրավում ե յեվ մոտ ապագայում ամբողջովին կզբակի հավաքական (կոլլեկտիվ) տնտեսությունը: Այսպես ե պատմությունը, այսպես ե տնտեսական հեղափոխության իմաստը մեր քննելիք շրջանում: Ստեղծված նոր տնտեսական պայմաններում գյուղացիներին հարկավոր ե այնպիսի անասուն, վոր արդարացնի կերի, պահպանման յեվ այլ ծախրեր:

Անասնապահության համար ամենակարեվորը կերի հարցն ե, ինչպես են՝ խոտարույների ցանքը, արմատապտուղների (բազուկ յեվ այլն) մշակութը, խոտհարքների յեվ արտաների բարելափումը, անասուններին հաշվով կերակրելը, որինակելի ախոռների կառուցումը յեվ այլն:

Խոտաբույսերի ցանքը յեվ ընդհանրապես կերի պայմանների բարելավումը մեր նոր շինարարության հերթական հրատապ հարցերից մեջն ե: Մի առած կա, թե՝ «կովի կաթն ատամի տակն ե», այսինքն՝ ուտելուց ե կախված. հենց կերի հարցից ել պետք ե սկսել ամենից առաջ: Յեթե ուզում ենք, վոր մեքենան աշխատի, առաջին հերթին նրան վառելանյութ ենք տալիս. կաթնատու ապրանքի կերն անպակաս պիտի լինի: Դրա համար ել հերթական խնդիր ե ցանքաշրջանառության մեջ մտցնել արմատապուղների մշակույթը, տարածել կերի խոտաբույսերի կուլտուրան: Յեթե գյուղացու տնտեսությունն ավելորդ կեր ունենա, ինքն իրեն կառաջանա այդ կերը լավագույն կերպով ոգտագործելու պահանջը: Խսկ այդ հնարավոր ե միայն կերը վերամշակման յենթարկելուց հետո, այժմնքն անամնապահության զարկ տալու շնորհիվ:

Յերենուկը, առվույտը յեվ կորնգանը ցանքաշրջանառության մեջ մտցնելուց յեվ արտոները լավացնելուց հետո միայն սկսում ե կաթնատնտեսության բարգավաճումը: Հաջորդ աստիճանը կարտոֆիլի յեվ արմատապտուղների (որինակ՝ բազուկի) մշակույթի տարածումն ե. դրա հետեւաները կինի կաթի արդյունաբերության ամենածաղկյալ վիճակը, սակայն այդ դեռ ապագայի խնդիր ե:

Դանիայում արմատապտուղների մշակույթն ստեղծել ե կաթի արդյունաբերություն: Այնտեղ շատ բիչ դեպքում են կերակրում կովերին խոտով կամ դարմանով, այն ինչ կովին որական 2-3 փութ բազուկ տալը սովորական յերեվույթ ե դարձել:

Խոտաբույսերի մշակույթի տարածմանը մեզ մոտ խանգարում եր հողային հարցի անկայուն դրությունը: Խսկ այժմ, յերբ վերջանալու վրա յե միջոյուղյան յեվ ներքին հողաբաժանությունը, խոտաբույսերի մշակույթը կզարդանա ուժեղ թափով:

Այդ բանի համար մեր անամնապահական շրջաններում հողային յեվ կլիմայական պայմանները շատ նպաստավոր են:

## ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՄ

ՍՇԽԱՏԵՑԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ, ՎՈՐՈՇ ԾՐԱԳՐՈՎ

Անասնապահության վերականգնման գործում հարկավոր ե վորոշ ծրագիր և հաջորդականություն: Ամենից առաջ հարկավոր ե այդ ծրագիրը պարզել և ի նկատի ունենալով գյուղական տնտեսության պայմանները, վորոշել թե գյուղին ինչ տեսակ անասուն ե հարկավոր, ինչպիսի շինությունն, կերի ինչ չափ և ալին: Հետո պիտի վորոշել, թե ներկա պայմաններում ինչ կարող ենք տալ և ինչ չենք կարող, ինչ տալ առաջին հերթին և ինչ վերջին: Պետք ե պարզել, թե ինչ կարող ե տալ ինքը գյուղացիությունը:

Բավական չե տաել, թե մեզ հարկավոր ե ոգտավետ անասուն, լուսավոր և տաք գոմ, խոտաբույսերի և արմատապտուղների մշակույթ, մաքրություն, խնամք և այլն: Բնականաբար ծագում ե մի հարց՝ թե ինչ ցեղի անասուն, ինչպիսի գոմեր են հարկավոր, վարտեղից ստանալ խոտաբույսերի և արմատապտուղների սերմեր և, վոր գըլխավորն ե՝ ինչից սկսել:

Գյուղացու անասունին մոտենալիս հարկավոր ե մատիտ, թուղթ և համրիչ ունենալ, գրել, թե ինչքան կաթ ե տալիս այդ անասունը, կշռել տված կերը և վերջում հաշվել, կովը քննել գոչ թե դրսից, այլ ներսից, քննել բաղմակողմանի և գնահատել նրան: Ապրանքի շահավետությունը յերեսում ե կերի մի միավորից ստացած կաթից, այդ կաթի յուղոտ լինելուց և կովի առողջությունից: Պսպղան մորթով ցեղական կովերը և սրանց կողմակիցները թող «վերից վար» նայեն մեր փոքրահասակ և խըզ-

ձուկ արտաքինով կովերին։ Մեր գյուղացու տնտեսության վերականգնումն այդ խղճուկ արտաքինով կովերի շնորհիվ ել լինելու։

Մեր ապրանքի ազնվացումը հնարավոր ել միայն այն դեպքում, յերբ գյուղացիք միահամուռ ուժերով գործի կոչեն։ Ի՞նչ ոգուտ կստացվի, յերբ մի գյուղացի խնամի մի ցեղի կով, իսկ հարևանը մի այլ ցեղի։ Դարձյալ նույն պատկերը կստացվի, ինչվոր կա այժմ մեր գյուղերում և բնորոշ ե մեր տավարի համար՝ բազմատեսակություն։ Հարկավոր ե աշխատել կազմակերպված, վոչ թե ջոջ-ջոկ, այլ միասին։

Ամբողջ աշխատանքը փորոշ հերթով պիտի դասավորել։ Յեթե մենք կաթնատնտեսական արտել կազմենք այնտեղ, վորտեղ կեր չկա, կովերը քիչ են, պարզ ե, փոք այդ աշխատանքից բան չի գուրս գա։ Պիտի սկսել կերի պայմանները լավացնելուց, ճահիճները չորացնելուց, առոտները բարելավելուց և այլն։ Յեթե մենք կովերի ծնեն աշնանը գցենք և տաք, լուսավոր գոմ, տաք հորթանոց չպատրաստենք, պարզ ե, վոր այդպիսի աշխատանքից ել ոգուտ չենք ստանա։

Յեթե ցանկանում ենք մեր անասունների ցեղն ազնվացնել և ընտրել ենք արդեն մի ցեղ, չի կարելի կովը թողնել այն տավարի հետ, վորի մեջ մի այլ ցեղի ցուլ (բուղա) կա, թե չե դրանից ել ոգուտ չի լինի։

Հարկավոր ե գիտենալ, թե անասնապահությունը լավացնելու համար ինչը հարկավոր ե հիմք ընդունել, առաջին հերթին ինչ կատարել և հետո՝ ինչ։

Մեր գյուղացու տնտեսությունը չափազանց ծուռ ու մուռ կողմեր և պակասություններ ունի։ Մի տեղն ուղղում ես, մի ուրիշ տեղն ե ծովում։ Հարկավոր ե գիտենալ, թե առաջ վնրանին ուղղել։

Հողաշափը հողը բաժանելուց առաջ հողի հատակա-

գիծն ե կազմում և հետո հողը բաժանում։ Այդպես ել հարկավոր ե անասնապահության վերականգնման համար. պիտի ունենալ աշխատանքի վորոշ ծրագիր։ Առանց այդ ծրագրի մենք գործին ոգուտ չենք տա, ավերածությունը չենք վերացնի։ Իսկ ծրագիրը կարելի յե մշակել միահամուռ ուժերով, գուցե և ոգնության կանչելով մասնագետ։ Ուստի կազմակերպվեցե՛մ, մշակեցե՛մ ծրագիր յեկ վորոշ հաջորդականությամբ համառորեն կիրառե՛մ կյանքում։

## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ՅԵԹԵ ԿԵՐՆ ԱՊԱՀՈՎ Ե, ՄԹԵՐՔՆԵՐԻ ՍՊԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱ-  
ԿԵՐՊԵՑԵՔ ԿՈՂՊԵՐԱԾԻՎ ՀԻՄՈՒՆՔՈՎ

Պանրի, կաթի և յուղի կազմակերպված սպառումն այն խթանն ե, վորը միայն կարող է գործի մեջ շահադրգուռություն առաջ բերել և հիմք ծառայել հետագա բարգավաճման:

Կազմակերպված սպառման առավելության լավագույն որինակ կարող է ծառայել Դանիայի գյուղական տնտեսությունը: Յերբ ացյալ գարու 70-ական թվականներին գերմանական պատերազմի ժամանակ Դանիան քայլքայվեց և ժողովուրդն աղքատության դուռն ընկալ, նաև հասկացավ յուր վտանգավոր վիճակը: Միանալով իրար, կազմակերպելով կոոպերատիվներ, դանիացիները միահամուռուժերով աշխատանքի անցան՝ կյանքի նոր շինարարության համար:

Յեվ կոոպերացիան ժողովրդին փրկեց կորստից:

Ծնորհիվ պանրագործական արտելների և յուղագործական կոոպերատիվների, վորոնց խիտ ցանցով ամբողջ յերկիրն եր պատաժ, տավարն ազնվացավ, լավացավ անասունների ինսամբն ու կերը և ամբողջ տնտեսությունն այնքան բարձրացավ, վոր Դանիան այժմ գյուղական տընտեսության որինակ է համարվում: Դանիան իրոք վոր կոոպերացիայի յերկիր ե, գյուղացիական ընկերությունների յերկիր:

Մեր յերկրում գյուղացու տնտեսության դրությունը շատ մոտ է այն դրության, վորպիսին ուներ Դանիայի

գյուղացին սրանից 50 տարի առաջ: Նրա պես մեր յերկիրն ել աղքատացել ե: Յեվ այս վիճակից յելնելու ելուրիշ միջոց չկա, մանավանդ կաթնատնտեսության համար. միակ ուղին տանում է գեղի կոոպերացիան:

Յեթե առաջ կաթի և յուղի կոոպերացիան իր ճամբին հանդիպում եր վաշխառու առեսրականին, վորն ուժեղ կերպով մրցում եր կոոպերատիվի հետ, իրեն վեցնելով առյուծի բաժինը,—այժմ այդ մրցակիցն այլիս չկա: Կոոպերատիվի միջոցով կաթնամթերքներն սպառելու համար շուկան լայնարձակ բաց ե: Հարկավոր է շտապել տիրանալ շուկային, վորպեսզի չզարթնի վաշխառու միջնորդը—մեր որերի առեսրականը, վորը կարող է դանդաղեցնել կաթի և յուղի արդյունաբերության կոոպերացումը:

Բոլորն ել գիտեն, վոր գյուղատնտեսության ամեն ճյուղի վաշխառուներ կան գյուղում: Վաշխառուները գընում են խաղողի բերքն այգեգործական շրջաններում. Նրանք չեն քաշվում և մանրունք գնելուց՝ ձու, կաթ, վոչխար և այլն: Գնորդ վաշխառուն այդ ապրանքի արդյունաբերության գործում վոչ մի բիսկ չունի, իսկ շատ հաճախ վաշխառվի պատճառով այդ տնտեսությունը վնաս է տալիս գյուղացուն: Վաշխառուն ապրանքի գներն իջեցնում ե մինչ այն աստիճան, վոր այդ ապրանքի արդյունաբերությունն այլիս ձեռնտու չի գյուղացու համար:

Միշտ պետք է հիշել, վոր ներկայումս միայն սեփական ուժերով կարելի յե տնտեսություն վերականգնել:

Միայն այն ժամանակ, յերբ գյուղացիք կազմատվեն կուլակ վաշխառուների լծից և կկազմեն կաթնատնտեսական ընկերություններ, ինչպես կազմում են սպառողական, գյուղատնտեսական, փոխառութնայողական և այլ ընկերություններ,—միայն այն ժամանակ գյուղացին կարող է բաերլավել իր տնտեսությունը, ունել ինքն իրեն:

Յեվ այդպիսի ոգնությունն ամենից հաստատն ե և ուղիղը:

Անամսապահության անոգուտ լինելը շատ պատճառ-ներից ե կախված, բայց այդ պատճառները գլխավորա-պես յերկուսն են՝ կաթի և մյուս մթերքննորի կանոնավոր սպառման բացակայությունը և յերկրորդ՝ կաթի արդյունաբերության թանգ լինելը:

Այդ թանգության պատճառը կերի պակասն ե, ան-չորհք կերակրելը, գյուղացու տավարի ցածր փորակը, վատ խնամքը և այլն։ Այդ ամենը թանգացնում են կաթի արդյունաբերությունը։

Ուրեմն, յեթե գյուղացիք վորոշել են կաթնատնտե-սությամբ պարապել, ամենից առաջ պիտի ազատվեն վաշ-խառու միջնորդներից և իրենք քաղաքում վաճառեն կամ կազմակերպեն պանրի, կաթի, յուղի և այլ մթերքների սպառման գործը։

Միայն կաթնատնտեսական արտելը կազատի գյուղա-ցուն վաշխառու միջնորդից։ Միայն արտելը կարող ե հե-տաքրքրություն առաջ բերել գեպի անամսապահությունը։ Միայն կաթնատնտեսական արտելը գյուղացու տնտեսու-թյունը կդարձնի շահավետ և գյուղացիք միայն արտելներ կազմակերպելով կարող են ոգնել իրենց։

## ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ՅԵՂԱԿԱՆ ԱՆԱՍՈՒԻՆ ԶՈԿԵՑԵՔ ՀԱՏԱՎԱՏԵՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎՈՉ ՀԱՏ ԴՈՒՅՆԻ

Վորակեսզի մեր տեղական տավարն արտասահմանից բերած տավարին հաղթի, հարկավոր ե տեղական տեսակ-ների մեջ նախնական ընտրություն կատարել հարկավոր ե ամենից շատ ոգտավետ անասուներին ընտրել։ Այդ աշխա-տանքը պիտի սկսել արտեղ, վորտեղ կերի համար լավ պայմաններ, լավ արոտատեղեր կան, վորտեղ ժողովուրդը շահագրգուված ե անամսապահության զարգացմամբ և վոր-տեղ այդ ուղղությամբ վորոշ աշխատանք կատարված ե, անասունների ցեղը մի քիչ ազնվացրած ե։ Մեր յերկրի սահմաններում կան այդպիսի մի քանի շրջաններ։

Շատերն ավելորդ տեղը ձգտում են, վոր ամբողջ տավարը «մի գույնի» լինի. այդ դյուրեկան ե աչքի հա-մար, բայց այդպիս կարողե վարվել միայն նա, ով անաս-նապահությունն իր համար զվարճալիք ե դարձրել ում հա-մար արտաքին տեսքը միակ գրավիչն ե ամբողջ աշխա-տանքի մեջ։ Անցյալում անամսապահների մեջ այդ տա-րածված եր և ունեցավ շատ տիտեր հետևանք, վորովհետե-որինակելի անամսապահությունը նրանք զվարճալիքի պես մի թեթև զբաղմունք եյին համարում։ Միանգամայն ան-հիմն ե և այն կարծիքը, վոր իրը թե ու կովն ավելի կաթ-նատու յե կամ կարմիր կովի կաթն ավելի լավ ե։ Սրանք վոչ մի հիմք չունեցող յենթագրություններ են, անա թե ինչու միաք չունի ցեղական անասուն ընտրելիսառաջնորդվել գույնով։ Միակ հաստատ չափն անասունի ոգտակարու-թյունն ե, նրա տված շահի չափը։

Ինչպես քաղաքում ապրողի համար վոչ մի նշանկություն չունի, թե ինչ կովի կաթ ե խմում սև, թե կարմիր, միայն թե կաթը համեղ լինի, այսպես ել գյուղացու համար միևնույն պիտի լինի, թե ինչ գույնի յե իր կովը՝ սև, թե կարմիր, միայն թե շատ և լավ կաթ տա:

Մեր տեղական անասուններից ընտրություն անելու դեպքում պետք ե առաջնորդվել կաթի չափով, թե այս կամ այն կովը վճրան և ինչպիսի կաթ ե տալիս։ Միայն այսպեսի տվյալներ ունենալուց հետո կարելի յե այս կամ այն կովը ջոկել վորպես ցեղական ապրանք, առանց ուշադրություն դարձնելու գույնին։ Տեղական անասունների հիմք պիտի ընդունել կաթնատու և առողջ մարմին ունեցող կովին։ Մնացած բոլոր նշանները, զանազան բծերը, աչքի շրջագծերը, գույնը և այլն չպիտի խանգարեն այդ հիմնական աշխատանքին։

Անասնապահ գյուղացիներն անմիջապես պիտի հոգան անասունների ցեղական գրքերի մասին։ Նախքան այդ գրքերը ձեռք բերելը, հարկավոր ե գիտենալ, թե ինչ գրել այդ գրքերի մեջ։ Առաջին հերթին հարկավոր ե նշանակել կաթի չափու, թե ամեն անգամ վճրան կաթ ե տվել կովը և կաթնատու լինելու ինչ նշաններ ունի. ցեղական գրքի մեջ հարկավոր ե գրել այն նշանները, վորոնք վերաբերում են կենդանու ծննդաբերության կամ առողջության, որինակ՝ կոնքի լայնությունը, յետեվի վոտների կանգնելու ձևը, կրծքի լայնությունը, յերկայնքը։ Պետք ե գրել կենդանու ընդհանուր տեսքը, գլխի և յեղջուրների տեսքը, վոր շատ բնորոշ և տեղական սի քանի տեսակների համար։

Այս թու ինչու միայն արտաքին նշաններով բան չի լինում, անհամեշտ ե գիտենալ և ներքին հատկությունը, կենդանու փորակը։ Ուրեմն հարկավոր ե միահամուռ ջանքերով մեր տեղական տեսակներից ընտրել, ամենից կաթնատուն և չի անցնի մի յերկու տամյակ տարի, մենք

ել Դանիայի և Շվեդիայի նժան կարող ենք ասել, վոր ունենք մեր տեղական տավարը, ընտրած ու զտած, վոր չենք փոխի դրսի վորեւե տեսակի հետ։

Կենդանիների այդ ընտրության աշխատանքը պիտի սկսել թե վերկեց և թե ներքեցից վերկեց՝ հատուկ աշակցության շնորհիվ, մասնագետների միջոցով գնահատելով տեղական կենդանիները և լավերն ընտրելով, ցուցահանդեսներ կազմակերպելով, խրախուսական պարզմներ տալով, տուրքից աղատելով ցեղական կենդանիներին և գավառի ցեղական գրքերի մեջ մուծելով այդպիսի կենդանիներին։ Այսպիսի աշխատանք պիտի կատարվի վերկեց, իսկ ներքեցից՝ գյուղացիները պիտի միանան և կազմակերպեն հասարակական անասնաբուժարաներ։



## ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ՄԻԱՅԵՐ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԵՐ ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԱՆԱՌՆԱԲՈՒԾ  
ԾԱՐԱՆՆԵՐ

Հասարակական անասնաբուծարանը միակ արագ և ճշ-  
մարիտ ճանապարհն եւ անձնական տնտեսությունից կողեկ-  
տիվ ստեղծագործության անցնելու համար։ Մեր ներկա  
պայմաններում միանգամայն հնարավոր եւ նման անասնա-  
բուծարանների հիմնումը, նրանք նյութական առանձին  
ծախք չեն պահանջում, հարկավոր եւ միայն ազգաբնակու-  
թյան լրաց խափերի ջերմ և գիտակից աջակցությունն  
այդ գործում։

Նման անասնաբուծարանները կազմակերպվում են  
հետեւյալ ձևով.—Ընտրում են մի գյուղ, վորի ընակիչները  
ծանոթ են անասնապահության և հետաքրքրվում են այդ  
գործով. ընտրած գյուղը պիտի անասունների կերով ապա-  
հովված լինի. Այդ գյուղում անասնատերերը միանում և  
կազմում են անասնապահությունը բարելավող մի ընկե-  
րություն։ Այդ նպատակի համար հրավիրվում ե մի մաս-  
նագետ, վորը միևնույն ժամանակ հանդիսանալու յեւ ա-  
նասնաբուծարանի վարիչը կամ վերահսկիչը։

Այդ հսկիչը շրջում է միության յուրաքանչյուր ան-  
դամի տնտեսությունը, նայում ե նրա անասուններին,  
գնահատում ե ոգտավետ լինելու աեսակետից և վորոշում  
ե, թե հարմար ե արդյոք բազմացնելու համար։ Յեթե հա-  
վանություն ե տրվում, գրանցվում ե ցեղական գրքի մեջ։

Գրքի մեջ գրանցված անասունն, ի հարկե, դարձյալ  
մուռ ե աիրոջ լիակատար իրավասության տակ։ Տերը  
պարտավորվում ե միայն կանոնավոր կերակրել ու խնամել.

առանց միության վարչության գիտության այդ անասունից  
ստացած հորթը տերը չի կարող վաճառել։ Ցեղական գրքի  
մեջ գրանցված անասուններին բեղմնավորում ե միայն  
վորոշ ցուլ (բուղա), վոր յենթարկվել ե մասնագիտի  
քննության։ Համաձայն վերջին պայմանի, բեղմնավորումը  
չի կարող կատարվել ուղած ժամանակ՝ նախիրի մեջ, այլ  
վորոշ որ. գրա համար մի վորոշ ժամանակով կենդանուն  
առանձնացնում են նախիրից։ Կենդանու բեղմնավորման և  
ծնելու սպասելիք որը գրանցվում ե մատյանի մեջ։

Կայանի ամբողջ գործունեյության ընթացքում նշանա-  
կվում ե տված կերի և ստացված կաթի քանակը։ Յերբեմն  
կաթը յենթարկվում ե քննության՝ յուղի չափը վորոշելու  
համար։ Այսպիսով, տարվա վերջին հնարավոր ե լինում  
ասել, թե ձեռնտու յեւ այս կամ այն կենդանին պահել,  
թե չեւ։

Անասնաբուծարանների շրջակա գյուղերում գավառի  
հողբաժինը պետք ե կազմակերպի անասնապահության  
դասընթացներ, խոշոր և մասն անասունների ցուցահանդես,  
գասախոսություններ՝ կերի, խնամքի և պահպանման մասին,  
փորձեր պիտի կատարել որինակելի կերակրման շուրջը և  
այլն։ Մի խոսքով այդ անասնաբուծարանները գտնում են  
մի տեսակ ոջախներ, վորտեղ կենտրոնանում ե շրջանի  
անասնապահական ամբողջ աշխատանքը։

Այդ անասնաբուծարաններն այժմ փոխարինելու յեն  
առաջիկան անասուններ արտադրող գործարաննե-  
րին, վորոնք գտնվում եյին մասնավոր անձանց իրավասու-  
թյան տակ։ Այժմ մասնավոր անասնապահ գործարանատեր  
չկա, այժմ անասուններն ել, հողն ել գտնվում են աշխատավոր  
գյուղացիության ձեռքին, իսկ այդ գյուղացիությունն մեծ  
մասամբ անկազմակերպ ե և ի վիճակի չեւ անասնապահու-  
թյան բարդ խնդիրները լուծելու։ Այդ բոլոր հարցերի պա-  
տասխանը միայն հասարակական անասնաբուծարանները  
կարող են տալ.

Բացի դրանից, անասնաբուծարանների լավ հորթը չեւ ուղարկվի մասգործին, այլ կպահպանվի և իր հերթին կտա արժեքավոր սերունդ։ Անասնաբուծարանի մի քանի տարվա աշխատանքի արդյունքը կլինի այս, վոր շրջանում կջոկվեն միանման և հավասար արժեք ունեցող կենդանիներ։

Հասարակական անասնաբուծարանները հենց իրենց՝ գյուղացիների գործն եւ, մասնագետները միայն աջակցում են, ոգնում են իրենց փորձով և գիտությամբ։ Հասարակական անասնաբուծարանը ցուցադրական կողմ ել ունի. այդուեղ մեր գյուղացու տավարը յենթարկվում ե վերագնահատման։ Այդ անասնաբուծարանները չափազանց շատ նյութ (հորթեր և այլն) կտան, վորի կարիքն այժմ զգում ե բնակչությունը։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ԳՈՄԸ ՊԵՏՔ Ե ԼՈՒՍԱՎՈՐ ԼԻՆԻ

Անասնապահության զարգացման համար ընտրությունից և կերակրելուց բացի, հարկավոր են մի շաբթ այլ միջոցներ՝ կիթը նույն բարձրության վրա պահելու համար, ինչպես և ընտրած կովկ առողջ պայմաններում կերակրելու համար։

Ամենից առաջ գոմի տաքության ու լուսավորության հարցը։ Գոմը պետք ե տաք լինի. ցուրտ գոմում կենդանին ավելի շատ ե յենթակա զանազան հիվանդությունների, կաթն ավելի քիչ ե տալիս, իսկ վոր գլխավորն ե, ցուրտ գոմում կովկ ավելի շատ ե ուտում։ Այդ ավելի կերը գնում ե նրա մարմնի պահպանության համար։

Բարեբախտաբար մեր գյուղերում գոմը շատ ե տաք, այնպես վոր զանգատվելու կարիք չունենք։ Մեր գոմերը մի խոշոր պակաս ունեն, նրանք լուսավոր չեն։ Ցեղեկով, յերբ գուրման այնքան առատ ե լույսը, գոմի ներսում, մի փոքրիկ ճեղքից, հազիվ լույսի մի թույլ շողք ե ներս ընկնում, այնպես վոր գոմը միշտ ել մնում է կես մութի մեջ։

Մթությունը ևս ճնշիչ կերպով ազդում ե կենդանիների զարգացման, ինչպես և այն ոգուտի վրա, վոր սպասում ենք նրանցից։ Հասարակ փորձն անգամ ցույց ե տալիս, վոր լուսավոր և արձակ գոմում կենդանին իրեն շատ ավելի լավ ե զգում, քան կիսամութ վորջում։

Հարկավոր ե որ առաջ վերացնել մեր գոմերի այդ պակասը և գոմերը լուսավոր շնորել

## ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ԱՆՑԵՔ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՆԸ ԾՆԵԼՈՒՆ

Կովկի կաթի քանակը բարձրացնելու գործում հետագա աշխատանքը գարնան փոխարեն ծնելուն աշնանը անցնեն եւ այդ բանը մի քիչ դժվար եւ և կապված եւ տնտեսության մասնակի փոփոխման հետ։ Յեթե կաթի սպառումը կանոնավոր չի կազմակերպած, յեթե չկա տաք և լուսավոր գոմ, տաք հորթանոց, այդ դեպքում գարնան ծնելն առավելություն ունի աշնան ծնունդից և, վոր գլխավորն եւ, ծնունդը լինում է տարվա տաք յեղանակին ավելի մոտ։ Նորածին հորթին սովորաբար տանում են խրճիթ և պահում մինչև տաքերն ընկնելլ։ Գարնան ծնունդը սովորաբար նախիրում բեղմնավորելու արդյուք եւ, իսկ այդ տնում է ամերող ամառը։ Ուրեմն քանի նախիրն ընդհանուր եւ արածում է միասին, գարնան ծնելը ևս կշարունակվի։ Գարնան ծնելը մի ուրիշ կողմ ել ունի. գյուղացու ընտանիքը գարնան և մանավանդ աշխատանքի յեռուն ժամանակ՝ ամրան ընթացքում ստիպված եւ ունենալ լավ մսունդ, քանի վոր կովի կաթից բացի ընտանիքի մյուս ուտելիքն սպառել եւ։

Ի հարկե հասկանալի յե, վոր այս ամենը նշանակություն ունի միայն այն շրջանների համար, փորտեղ որինակելի անասնապահություն չկա։ Շահավետ անասնապահության համար կասկած չկա, վոր աշնան ծնելն ավելի ձեռնառ յեւ և միայն այդ դեպքում հնարավոր եւ կաթնամասությունն արդյունավետ դարձնել և մեր տեղական անասունների փորակը բարձրացնել։ Կաթնամասությամբ վաղուց պարապող յեվրոպական ազգերը մի առած ունեն-

«աշխանը ծնող կովը հավասար եւ տարին յերկու անգամ ծնելուն»։

Ծնելուց 25—28 որ հետո կովն սկսում եւ բեր գալ. արդ մասամբ կախված և կենդանու առողջությունից և նրա մնվելու պայմաններից։ Այդ շրջանը աչքաթող չպիտի անել, հակառակ դեպքում ծնելը մի ամիս ել կուշանա, յեթե առիթից չոգտվել, մոտավորապես 3 շաբթից հետո նորից սկսում եւ բեր գալու շրջանը։

Յեթե կովը փետրվարին եւ ծնել, հարկավոր եւ մարտին բեղմնավորել, վորպեսզի հաջորդ ծնունդը լինի դեկտեմբերին։ Իսկ յեթե դեկտեմբերին ծնել եւ, պիտի բեղմնավորել հունվարին՝ հոկտեմբերին ծնելու համար։ Հաջորդ տարին բեղմնավորումը կարելի յեւ կատարել նոյեմբերին և կովը կծնի ոգոսառություն։ Այսպիսով մի 2-3 տարուց հետո կարելի յեւ անցնել աշնան ծնելուն։ Դրա համար հարկավոր եւ աչքաթող չանել ծնելուց հետո բեր գալու առաջին շրջանը։

Յեթե առաջին անգամ յերինչն ենք բեղմնավորում, հարկավոր եւ, վոր այդ յերինչն առնվազն յերկու տարեկան լինի, վորպեսզի առաջին ծննդի ժամանակ յերինչն արդեն 3-ի մոտ լինի կամ  $2\frac{1}{2}$  տարուց ավել։

Այդ տեսակեաից աշնան ծնած հորթերն ավելի լավ են քան, գարնան ծնածը։ Առաջին տարին նրանք ազատ թուշկոտում են, իսկ յերկրորդ գարնան նրանք այնքան արդեն մեծացած են լինում, վոր կարելի յեւ բեղմնավորել։ Իսկ գարնան ծնած հորթերն առաջին ամառը թույլ են լինում, իսկ յերկրորդ տարին՝ շատ անգամ դեռ չեցված արդեն բեղմնավորվում են, ժամանակից շուտ, զրա համար ել լավ չեն զարգանում և դառնում են վատ կաթնամասու կովեր։

Այսպես ուրեմն, գարնան ծննդից աշնանն անցնելու համար պետք եւ ձեռք քաշել նախիրում բեղմնավորելուց

և կանոնավորել այդ: Գոմում կամ բակում բեղմնավորելն այն ողուան ունի, վոր խնայվում ե բուղայի ուժը և յերկրորդ՝ այդպիսի բեղմնավորում ուզած ժամանակ կարելի յե կատարել և կանոնավորել ճնունդի ժամանակը: Նախիրի մեջ ամեր մի ցուլի նորմալ հաշվով ընկնում ե տարեկան մոտ 50-60 զլուս կով, իսկ տանը բեղմնավորելու դեպքում տարեկան մոտ 80 զլուս: Այս վերջին դեպքում հարկավոր ե ունենալ ցեղային ցուլ և առանձին կայան:

Փորձը ցույց ե տվել, վոր ավելի լավ ե հորուգած (կապած) արածել, քան նախիրում: Այս գեղքում կերը անտեսվում ե, կաթի քանակը շատանում ե, կովը զիրանում ե և հանգստանում, տավարածից կախում չունի, կովերն իրար չեն խփի ու վնասի և ընդհանրապես կովերը կազատվեն վատ արոտներում, ճահճոտ տեղերում արածելու բոլոր վնասներից: Նախիրի մեջ արածելու դեպքում կովն ավելի շուտ և հիվանդանում զանազան ախտերով, քան կապած արածելիս:

Յեթե կովը բեղմնավորել են վաղ գարնան, նա շատ հաճախ ծնում ե մինչև սաստիկ ցրտերի սկսելը. այդ դեպքում կովն ավելի հեշտ և ծնում, քիչ ե հիվանդանում, ավելի լավ ե սնկում, քանի վոր աշնան կերն ավելի լավ ե գարնան կերից: Շատ քիչ ե պատահում, վոր աշնան ծնած կովը հիվանդանա, հորթը կուշտ կաթ ե ուտում, վորովնեակ գյուղացու ընտանիքի համար աշնան կաթն այնքան ել հարկավոր չի, վորքան գարնանը և ամառը (դաշտային աշխատանքների ժամանակ):

Հարկավոր ե ձմեռվա համար պատրաստել լավ սննդի պաշար (քուսպ, թեփ, ալյուր) և արմատապտուղներ, վորպեսզի ծնելուց հետո կովի կաթի քանակը համապատասխան բարձրության վրա մնա, թե չե հետո, գարնան՝ դեմ, կաթի քանակը բարձրացնել շատ դժվար կլինի:

### ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ԿՈՐՔԱՆ ԿԱՐԵԼԻ ՑԵ ՇԱՏ ԱՆԱՍՈՒԻ ՊԱՀԵՑԵՐԵՐ ՅԵՎ ՊԱՀՊԱՆԵՑԵՐԵՐ ՄԱՏԴԱՑՆԵՐԻՆ

Մեր անասնապահությունը կարելի յե արդյունավետ դարձնել վոչ միայն մեծահասակ անասուններին ինամելով, այլ և բարելավելով մատղաշների վիճակը:

Հորթերի պահպանման ժամանակ ի նկատի պիտի ունենալ, վոր ծնվելուց հետո կաթնատու կենդանին շատ արագ ե զարգանում հենց առաջին որերում և ամսում: Այդ ժամանակ շատ լավ և շատ արագ զարգանում ե թե վոսկրային մասը և թե մկանները (միաը) և այլն: Յեթե արդ շղանից չոգտվենք և խնայենք կերը, այն ժամանակ հետագայում շատ դժվար կլինի մատղաշների վարդումը կանոնավորել և պակասը շտկել: Այն ինչ մեր գյուղերում նկատված ե այդ՝ թերատ կերակրել կենդանուն ծընվելուց հետո առաջին ամիսներում: Կաթնասուն կենդանիների համար կաթն անփոխարինելի կեր ե: Ծնվելուց անմիջապես հետո հորթին պիտի առանձնացնել մորից և կերակրել վորոշ շափի համաձայն:

Այդ չափը պիտի վորոշել ծնվելու յերկրորդ որը. հորթին իսկույն պիտի կշռել, յեթե վորձ ե, պիտի ամեն որ տալ կենդանի քաշի մի հինգերորդի չափ կաթ. իսկ յեթե եղ ե մի վեցերորդի չափ. որինակ՝ յեթե վորձ հորթի քաշը 40 ֆունտ ե, ուրեմն որական պիտի տալ 8 ֆ. կաթ, յեթե եղ հորթի քաշը 30 ֆունտ ե, որական պիտի տալ 5 ֆունտ կաթ: Կաթի այդ քանակը միանգամից չպիտի տալ, այլ 4—5 անգամ որական. կաթը պիտի տաք լինի և մաքուր: Ամանեղենը ևս պետք ե մաքուր պահել. ամեն

անգամ՝ կաթ տալուց առաջ և հետո՝ պետք ե ամանեղենը լվանալ մաքուր ջրով։ Ձեռները պետք ե մաքուր պահել ու ամեն անգամ սապոնով լվանալ։

Կաթի չափը վորոշելուց հետո այդ ձևով կերակրում են 3 որ, վորից հետո ավելացնում են մի ֆունտ, կերակրում դարձյալ յերեք որ, հետո նորից ավելացնում և այլն, մինչև յերեք շաբաթ։ 3-րդ շաբաթվա վերջին մեր հորթը յեթե ունի մեկ փութ կամ մեկ ու կես փութ կենդանի քաշ, ստանում ե որական 12—15 ֆունտ մաքուր, յերեսը չքաշած կաթ։

Չորրորդ շաբաթից հետո սկսում են տալ յերեսը քաշած կաթ, բայց վոչ միանգամից, այլ աստիճանաբար։ յուրաքանչյուր յերեք որից հետո յերկու փունտ մաքուր կաթը փոխարինում են յերկու ֆունտ յերեսը քաշած կաթով։ Այսպիսով, 2-րդ ամսվա վերջին հորթին տալիս են միայն յերեսը քաշած կաթ. այդպիսի կաթով ցանկալի յե հորթին կերակրել մինչև 6 ամսական հասակը։ Մաքուր կաթի փոխարեն յերեսը քաշած կաթ տալու դեպքում անհրաժեշտ ե տալ թեփ կամ քուսպ. սկզբում մի քիչ՝ որական 1—1<sup>1</sup>/<sub>2</sub> ֆունտ, իսկ հետո 8—5 ֆունտ յուրաքանչյուր հորթին։ Չորրորդ շաբաթից կարելի յե տալ մննդաբար խոտ, վորպեսզի հորթը վարժվի կոշտ կերի։

Հաջող զարգացման համար պետք ե մատղաշ անասունին ազատ թողնել հորթանոցում կամ բակում՝ ազատ շարժումներ անելու և մաքուր ոդ ծծելու համար։ Հորթանոցը պիտի ազատ լինի և արձակ, հորթի բկից պարան չպիտի անցնել և կապել, ինչպես մեզ մոտ անում են։

Աղ տալը ևս շատ մեծ նշանակություն ունի։ Հորթանոցում լավ է ունենալ աղի կոշտեր, վորպեսզի հորթերն ուզած ժամանակ լիգին։ Այդպիսի աղը նպաստում է, վոր ջանել անասունի փոսկորն ամրանա։

## ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏԱԳՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑՔ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԵՐ

Մենք տեսանք, վոր անասնապահության վերականգնման համար հարկավոր ե շատ աշխատանք թափել։ Այդ աշխատանքը պարտավոր ե կատարել մեր աշխատավոր գյուղացիությունը և կազմակերպել ընկերություններ կամ միություններ անասնապահության զարգացման համար։

Ընկերությունն ընտրում ե վարչություն, վոր հոգե և տանում ցեղական անասունների պահպանման վրա, կազմակերպում ե կարիք ունեցող շրջաններում ցեղական անասունների վաճառք, տալիս ե անհրաժեշտ աեղեկություններ, խորհուրդներ և ցուցմունքներ։

Յեթե մեկը ցանկանում ե ծախել իր ջանել անասունը, դիմում ե վարչության։ Վարչությունը շատ մատչելի գրնով այդ անասունը ծախում ե վոչ թե մսագործին, այլ այն շրջանում, վորտեղ անասունի կարիք կա։ Մեր յուրաքանչյուր գավառում պիսի հիմնել այդպիսի ընկերություններ, գավհողբաժինները պիտի լինեն այնպիսի հիմնարկներ, վորտեղ ցուցմունքներ են արվում ջանել անասունների առուտուրի ժամանակ։

Այժմ դեռ այդ չկա. ծախողն առնող ե վնարում, առնողն ել՝ ծախող. բայց հին ուղիներով չպիտի գնալ. միտք չունի բացել պետական ցուլակայաններ և ժողովրդի ուշագրությունը չհրավիրել։ Այդ դեպքում նորից կերկնվի հին սխալը և գործը կփչանա։

Պետական գործին պետական վերաբերմունք ել ցույց են տալիս։ Այլ բան կլինի, յեթե ցուլակայանների կամ անասնաբուժաբանների կազմակերպման գործին ձեռնամուխ

լինի ինքը՝ կոռակերացման յենթարկված ժողովուրդը։ Այդ դեպքում կինի թե անհրաժեշտ ջանք, թե անասնապահությունը զարգացնելու կարևոր աշխատանքի զիտակցություն և թե հավատ ու համոզում, վոր ընդհանուր ուժերով կարելի յե գործ անել։

Յեղական անասուն քիչ կա, յեղածն ել ավելի քչանում ե, յեթե տեղերում համապատասխան կազմակերպություն չկա։

Յեթե մի խումբ գյուղացիներ ցանկանան ազնվացնել իրենց անասունների ցեղը, գարնան ծնունդից անցնել աշնան, ապա նրանք ստիպված են լինելու ձեռք քաշել նախիր պահելուց և նախիրում կովը բեղմնավորելուց։ Ուրեմն՝ հարկավոր ե գնել այն տեսակի ցուլ, վորպիսին ուղղում են բազմացնել ամեն մարդ չի կարող մի-մի ցուլ գնել, ուժը չի պատի։ Ահա հենց դրա համար ել մի խումբ գյուղացիներ միանում են և կազմում կամ ցուլային միություն կամ անասնապահական կայանի ընկերություն։

Ըսկերության յուրաքանչյուր անդամ պարտական ե՝ 1) իր կովերը, վոր գրանցված են ընկերության յեղական մատայանում, բեղմնավորել ընդհանուր ցուլով, 2) ընկերության գործունեյության շրջանում յեղած անասնապահական ցուցահանդեսին դուրս բերել իր ապրանքը, 3) ընկերության վարչությունը տեղեկություն տալ իր ապրանքի, նրանց կերակրելու կարգի և շահավետության մասին, 4) վճարել տարեկան անդամագմար։

Այն գյուղացին, վոր յուր կովը ընկերության ցուլով ե բեղմնավորել, առանց վարչության գիտության, իրավունք չունի մորթել կամ հորթը վաճառել մի ուրիշին՝ մասցի համար։

Միայն այն ժամանակ, յերբ ընակչությունը կկազմի նման ընկերություններ, մեր կաթնատու ապրանքը կը լավանա, և վոչ թե տարեց տարի կվատանա ու փոքրանա։

## ԻՆԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՔԱՇՈՎ ԿԵՐԱԿՐԵՑԵՔ

Կերի և կերակրման վերաբերյալ հերթական խնդիր ե առանց չափի կերակրելուց անցնել չափով և կշռով կերակրելուն։

Անասուններին քաշով կերակրեցեք, կշռեցեք կերը, կշռեցեք և տված կաթը, վորոշեցեք ձեր անասունի քաշը։

Քաշով կերակրելու զիսավոր նպատակն այն ե, վոր կերի նվազ քանակից ստանալ հնարավոր չափի առավել ոգուտ, այսինքն՝ ստանալ ավելի շատ միս, ճարպ, կաթ։

Բայց վորքան տալ և ինչպէս կերակրել։

Առաջին հարցի պատասխանը շատ պարզ ե։ Կովին պիտի տալ այնքան, վորպեսզի նա նախ՝ չղարի և յերկորդ՝ կաթ տա. վոչ ավել, վոչ պակաս։ Հենց դրա մեջ ե չափով կերակրելու գաղտնիքը։

Կովի ոժանդակող կերը պիտի կոշտ լինի և լայնածավալ, վորպեսզի պինդ լըցնի կովի առաջին ստամոքսը, վորը կարող ե տանել մինչև 12 վերը ջուր։ Պարզ ե, վոր շատ գժվար ե միայն այսուրով լցնել այդպիսի ստամոքսը. պիտք ե ունենալ կամ խոտ ու դարման և կամ արմատապտուզ։ Միայն այդ դեպքում կովը կկշտանա։

Կոշտ կերից պիտի տալ որական կովի կենդանի քաշի յուրաքանչյուր փութին մի փունտ. այսինքն՝ յեթե կովը 20 փութ ե, հարկավոր ե նրան ամեն որ տալ 20 փունտ խոտ. Խոտի փոխարեն կարելի յե տալ և դարման, հաշվելով, վոր 3 փունտ խոտը հավասար ե 4-5 փունտ դարմանի։ Խոտի մի մասը կարելի յե փոխարինել արմատապտուզներով։ 3 փունտ խոտի փոխարեն 8-10 փունտ արմատապտուզ։

Փոխարինման դեպքում անպատճառ պիտի ինկատի ունենալ և կերի ծավալը:

Կերն որական մի անգամ չպիտի տալ, այլ 2-3, հավասար դադարից հետո. Կերը պիտի տալ վոչ տաշտի և վոչ ել կողովի մեջ, այլ հարմար ախոռում, վորպեսզի կերը թրիքին չխառնվի:

Շահավետ կերը, այսինքն այն կերը, վոր կաթ պիտի դառնա, մեծ ծավալ չպիտի ունենա, պետք ելինի ուժեղ, հարուստ մննդարար նյութերով սպիտակուցով, ճարպով, շաքարով և այլն, այսինքն՝ այն նյութերով, ինչ վոր կան կաթի մեջ։ Այդպիսի կեր են գարու ալյուրը, թեփը, քուսպը, բամբակի հունգը և այլն։

Այդ կերից մեկը հարուստ եւ սպիտակուցով, մյուսը՝ ճարպով, յերրորդն ուլայով (կրախմալով) և այլն, այսինքն՝ կաթ կազմելու համար անհրաժեշտ նյութերով։ Դրա համար ել կոչվում եւ ուժեղ կեր։

Այդպիսի կեր կարելի յե տալ 3 ֆունտ կաթին մեկ ֆունտ հաշվելով, այսինքն՝ յեթե կովը տալիս ե 15 ֆունտ կաթ, նրան հարկավոր ե որական՝ 5 ֆունտ ուժեղ կեր տալ. ինչպես են որինակ՝ քուսպը, ալյուրը և այլն։

Բավական չե իմանալ, թե ինչով կերակրել, հարկավոր ե իմանող նաև թե ինչպես կերակրել։ Յեթե միենույն կերը զանազան տեսակ տանք կովին, տարբեր արդյունք կստանանք։

Ուժեղ կերը կարելի յե չոր տալ, կամ մի քիչ թրջել աղել թեթև և տալ ապուրի պես։ Ուժեղ կերը տալիս են խոտի փշրանքի կամ դարմանի հետ. իհարկե, կերի ծավալը փոխվում է։

Չփչացած և չծլած կարտոֆիլը կարելի յե տալ հում, միայն մանրած և ցեխից մաքրած։ Սաղ կարտոֆիլից կովը կարող ե խեղղվել։ Յեթե կարտոֆիլը սառած է կամ ցրտատար, կամ բորբոսնած ու փտած, ավելի լավ ե կո-

վերին չտալ, մանավանդ ծանրած կովերին. այդ դեպքում կովը կարող ե հորթատել։ Ծլած կարտոֆիլ կարելի յե տալ յեփելուց հետո։

Բազուկ, գազար, շաղգամ կարելի յե հում տալ, ինչպես գանիսացիք են տալիս։ Բայց յեթե ժամանակ կա և արմատապուղն ել քիչ ե, ավելի լավ ե մանրել, մի քիչ խաշել և տալ դարմանի հետ միասին, վրան թեթև ալյուր ցանելուց հետո։

Հարկավոր ե ջրել տաք գոմում, վոչ թե պաղ, այլ սենյակի տաք ջրով։ Ցուրտ ժամանակ չի կարելի զբառում տաք ջրել, զբանից կովերը շատ-շուտ դողում են և խսկույն մրսում։ Որական պետք ե յերկու անգամ ջրել։ Ավելի լավ ե ջուրը պահել կովի գունչի տակ, վորպեսզի կովն ուղածի չափ և ամեն ժամանակ կարողանա խմել։

## ՏԱՄԵՐՈՐԴ ՊԱՏԳԱՄ

ԳՅՈՒՂԱՏԻՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ,  
ԶՐՈՒՅՑՆԵՐԻՆ ՅԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՀԱՃԱԽԵՑԵ՞Ք  
ՅԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՔ ԲԵՐԵ՞Ք

Փողովրդական տնտեսության և վոչ մի ճյուղ այնքան հարուստ չե նախապաշարումով, մնութիւնապաշտությամբ, գուշակություններով, վորքան անասնապահությունը. Ել սատանա ու քաջք, ել «չար աչք»:

Յեթե առավոտյան դեմ գոմում կովերին քրտնած են տեսնում, պատճառը սատանային են վերագրում, վոր իբր թե գիշերով կովերի վրա նստել ու քշել ե: Յեթե կովի կաթը ցամաքել ե, ասում են՝ փորի «տակով ծիծեռնակ ե անցել», կամ թե մի մարդ՝ «չար աչքանի ոքմին» աչքով ե տվել: Յեթե կովը չի որոճում, ասում են, թե կերի հետ մկան բռն ե կերել և այլն:

Յեվ ի հարկե, ոգնության են կանչում զանազան պառակների և «իմաստուն» մարդկանց, վորոնք սատանայի դեմ միջոց դիմեն, ցամաքած կաթը շատացնում, վորոճալը վերադարձնում են:

Խավարի և տգիտության այդ հաստ շերտը պատռելը գժվարանում ե նրանով, վոր, ինչպես գյուղացիք են ասում, անասնապահությունը կանանց գործն ե: Գյուղի յերիտասարդությունը, վոր քաղաքներում ե յեղել, ծառայել ե բանակում, շատ ավելի հեշտ ե հասկանում զանազան խորհուրդներ ու ցուցմունքներ, քան աղջիկները և, մանավանդ, հասակավոր կանայք, վորոնց ամբողջ կյանքն անցել ե մնութիւնավարիքի մեջ և պատերից լսած ցուցմունքով. «պատերից հայրերին, հայրերից ել զավակներին ժառանգաբար անցնում են այդ զառանցանքները»...

Բայց և այնպես հարկավոր ե այդ խավարին վերջ տալ, հակառակ դեպքում վերոհիշյալ բոլոր խորհուրդներն որինակելի անասնապահության մասին անիբագործելի կմնան, ինչպես մինչև այժմ մնացել են: Գյուղացիք ժողովում վորոշում են կազմակերպել կաթնատնտեսական արտել, իսկ կովի տերը կինն ե. նա չի ցանկանում, վոր մի ուրիշը խառնվի տավարի գործին և դրանով ել վերջանում ե խնդիրը:

Մնութիւնավարիքի և տգիտության դեմ կովերու միակ ձշմարիտ ուղին ժողովրդական լայն խավերի և, մանավանդ, գյուղի կանանց լուսավորումն ե. այդ ճանապարհն ստուգված ե և մեզ մոտ և արտասահմանում:

Գիտության տվյալների վրա հիմնված և փորձով ստուգած տեղեկությունները միայն գյուղը կազմակեն մնութիւնավարիքից և վերջ կտան գյուղական խավարին: Այդ գիտությունը ձեռք ե բերվում վոչ միայն դպրոցում, այլ և դպրոցից դուրս, ինքնակրթությամբ և կյանքի փորձով: Յեթե մեծահասակի համար դպրոցը փակ է, այդ դեռ չինչանակում, վոր «ուշ ե սովորել», վոր ժամանակն անցել ե: Յերիտասարդների դպրոցին հաջորդում և լրացնում ե դպրոց մեծահասակների համար, իբր գյուղական դասընթաց, զրույց, ընթերցանություն և զառախոսություն:

Յեթե լավ դեկավարություն լինի և գործը լավ կազմակերպած, նույնիսկ կիսազրագետ մեծահասակի համար ել այդ դպրոցները սատչելի կլինեն և նա այդտեղ ձեռք կը երի իր համար արժման հրաժեշտ գիտելիքը: Դասընթացները հենց դպրոցից դրանով ել տարբերվում են. նրանք լուսավորում են մեծահասակ բնակչության և տալիս են մատչելի տեղեկություններ գյուղատնտեսության հրատապ խնդիրների մասին: Այդպիսի զրույցների և դասախոսությունների նպատակն ե վոչ միայն դասավանդել, այլև համոզել: Դրա համար ել նրանց զուգորդում ե մողական լավաերը, զանազան նկարներ և իբեր, վորպեսզի լուղա-

աչքով ևս տեսնի ու համոզվի։ Շատ հաճախ ընթերցման հետ փորձեր են անում, ինչպես որինակ՝ ցուցադրական կերակրման փորձեր, վորոնցով հաստատում են կարդացածի ճշմարտությունը։

Արտադպրոցական լուսավորության գործում խմբական զրույցներն անասնապահության վերաբերյալ, — հերթական գործ ե, որա նպատակն ե միտքը զարթեցնել, առաջ բերել հետաքրքրություն ժողովրդի լայն խավերի մեջ դեպի անասնապահությունն ու կաթնատնտեսությունը։ Այդ ընթերցանության նյութը հրատապ ինդիքներ են և այնքան մատչելի, վոր հասկանալի յե բոլորի համար, այդ զրույցների վայրը խրճիթ-ընթերցարանն ե, զյուղացու տունը կամ զյուղի պարոցը, կամ հենց զյուղում մի ոդա։

Հաջորդ աստիճանը գասախոսությունն ե, վորի նպատակն ե զյուղատնտեսության այս կամ այն ճյուղի մասին ունեցած տեղեկությունը լայնացնել ու խորացնել։ Դրա համար ել որվա վորոշ ժամինն են լինում, վորոշ մնայուն ունենդիքների համար։ Այդ գասախոսություններն ունինդիքներին տալիս են զեկավարող տեղեկություններ անտեսություն վարելու մասին։

Վերջապես արտադպրոցական կրթության բարձրագույն աստիճանը գասընթացն ե. այդ գասընթացների նպատակն ե պատրաստել զանազան ճյուղերի համար աշխատակիցներ, որինակ՝ կաթնատնտեսներ, կթողներ, նախրապաններ և այլն։ Դրա համար ել գասընթացի հետ միշտ ել լինում ե գործնական աշխատանք, վորպեսզի ունինդիքները փորձով սովորեն այն, ինչի մասին խոսվում ե գասընթացում։

♦ Արտադպրոցական լուսավորության վերոհիշյալ բոլոր միջոցներն ել հրատապ են և անհրաժեշտ։ Յեթե առանց զիտության չի կարելի բարձրացնել առանձին զյուղացիների անասնապահությունը, առավել ևս դժվար ե բարձրացնել անասնապահությունը պետական անտեսություններում և

անասնաբուծարաններում, վորովհետեւ այդ կայանների աշխատակիցները շրջակա գյուղացիք են, առանց հատուկ պատրաստության ու փորձի։

Ամեն մարդ իր իմացած գործում վարպետ ե. յեթե հացթուխը կոշիկ կարել չի կարող, ապա ամեն զյուղացի ել անասնապահ լինել չի կարող. հարկավոր ե մեզ մոտ ևս ստեղծել այնպիսի վարպետներ, վորոնց նանիայում ասում են «կերակրման վարպետ», այսինքն՝ անասուններին. կերակրելու գործից հասկացող մարդ։ Մեզ մոտ շատ իզուր են կարծում, թե հենց կերը յեղավ թե չե, ամեն մարդ ել կարող ե տավարին կերակրել։

Մեր անասնապահությունը նկատելի չափով չի բարձրանա, մինչեւ վոր չկազմակերպենք դասընթացներ կաթնատնտեսության վարպետներ, նախրապաններ և կթողներ պատրաստելու համար։ Այդ դասընթացների կազմակերպության գործը կախված ե զյուղացիներից։ Յեթե նրանք այս գործին զիտակից վերաբերունք ցույց տան, մնացածը հեշտ է. Պետք ե զիտակից լինել, քանի վոր դասընթացների ունինդիքները հասակավոր զյուղացիք են։ Դրանով ել արտադպրոցական լուսավորությունը տարբերվում ե դպրոցականից, վոր ըսկավում ե մանուկ հասակում ի հարկե, չի կարելի պահանջել, վոր մանուկներն ունենան զիտակից վերաբերունք դեպի ավանդվող առարկաները։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒ՞՞ և ՅԵԼՔԸ

«Մեր նախալեռնային և լեռնային  
շրջանների փրկությունը միայն ա-  
նասնապահության մեջ է»:

ՅԵԼՔԸ անասնապահության զարգացման մեջ եւ:

Առանց կերի անասնապահություն չկա:

ՅԵԼՔԸ—խոտաբույսերի և արժատապառվածերի մշա-  
կույթի մեջ եւ, արոտաւեղիների և խոտհարքների բարե-  
լավման մեջ:

Հարկավոր ե հասարակական (կոլեկտիվ) անասնա-  
պահական կայաններ հիմնել, պետք ե անցնել անասուն-  
ներին չափով կերակրելուն, պիտի շնորհ լուսավոր և տաք  
գոմեր, կազմակերպել հակողություն կանոնավոր խնամքի  
և կերակրման համար, պետք ե հրաժարվել նախիրուժ  
տավարը բեղմնավորելուց, ուրեմն և գարնան ծնելուց պի-  
տի աշնան ծնունդին անցնել:

ՅԵԼՔԸ՝ անասնապահական մթերքների կազմակերպված  
վաճառքի մեջ եւ, դասախոսություններին և դասընթացնե-  
րին հաճախելու, կրթության և ինքնակրթության մեջ:

ՅԵԼՔԸ՝ դեպի իր ուժերը և դեպի իր զործն ունեցած  
հավատի մեջ եւ:

Ահա թե ուր ե յԵԼՔԸ:

Ընարեցեք այս յԵԼՔԸ վորեն մեկը, իսկ ավելի լավ  
կանեք, յԵԼՔԸ ընդունեք այն ամենը նույն կարգով, ինչ  
ասված ե պյոտեղ, և դուք կուշտ ու հագնված կլինիք:

Զքնեք վոչ միայն դուք, այլ և զարթեցրեք ձեր հա-  
բեանին:

«Ազգային գրադարան



NL0282934

21-650